# Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
## ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
## ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

*ՀՀ, Երևան 0010, Տիգրան Մեծի 17, հեռ.՝ +374 10 59 70 93,*
*էլ.փոստ՝* lingvolal51@gmail.com


16. 05. 2019թ.

Հարգելի՛ գործընկերներ

**Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 2019թ. հոկտեմբերի 25-26-ը**
**գումարում է հանրապետական գիտաժողով՝**
**«Լեզվաբանական տերմինաբանության հարցեր» խորագրով**

Գիտաժողովի ենթաուղղություններն են՝ *լեզվաբանական տերմինների բառարանագրություն, լեզվաբանական տերմինահամակարգ, բառ և տերմին, տերմինաշինություն, տերմինային պատճենումներ, տերմինագործածություն, տերմինային համարժեքություն, տերմինային աստիճանակարգություն, տերմինային բազմիմաստություն։*

Գիտաժողովին մասնակցելու հայտը /տես՝ կից/ և զեկուցման հիմնադրույթները /1-2 էջի սահմաններում, շարվածքը՝ հայերեն-sylfaen, տառաչափը՝ 12, միջտողայինը՝ 1,5/ խնդրում ենք ուղարկել լաբորատորիայի էլ. փոստին, մինչև հունիսի 14-ը։ Կազմակերպչական կոմիտեի կողմից ընտրված մասնակիցները կտեղեկացվեն մինչև հուլիսի 10-ը, նրանց զեկուցումների հիմնադրույթները առանձին ժողովածուով կտպագրվեն նախքան գիտաժողովը։

Գիտաժողովում արված զեկուցումները /մինչև 10 էջ, շարվածքը՝ հայերեն-sylfaen, տառաչափը՝ 12, միջտողայինը՝ 1,5/ հոդվածների տեսքով կհրատարակվեն գիտաժողովից հետո առանձին ժողովածուով։ Հոդվածին կից ներկայացնել ամփոփումները ռուսերեն և անգլերեն-Times New Roman՝ յուրաքանչյուրը կես էջի սահմաններում։

Կանխավ շնորհակալությամբ՝

***ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ***